ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԻ 06.12.2013թ. թիվ 63-Լ ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ «ՓԱՍՏԱԲԱՆԻ ԱՐՏՈՆԱԳԻՐ ԵՎ ՎԿԱՅԱԿԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ» ԿԱՐԳԸ ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի ութերորդ մասի 15-րդ կետի, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ պարբերության և Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կանոնադրության 17.3 կետի 27-րդ ենթակետի պահանջներով,

հաշվի առնելով ՀՀ փաստաբանների պալատի նախագահի 06.12.2013թ. թիվ 63-Լ որոշման թիվ 1 հավելվածով հաստատված «Փաստաբանի արտոնագիր և վկայական տրամադրելու» կարգում փոփոխություններ և լրացումներ կատարելու անհրաժեշտությունը,

նկատի ունենալով այն, որ անհրաժեշտ փոփոխություններն ու լրացումները ծավալուն են,

Ո Ր Ո Շ Ե Ց Ի՝

- ***ՀՀ փաստաբանների պալատի նախագահի 06.12.2013թ. թիվ 63-Լ որոշմամբ հաստատված «Փաստաբանի արտոնագիր և վկայական տրամադրելու» կարգը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:***

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի նախագահ՝ Արա Զոհրաբյան

03 հունիսի 2016թ.
թիվ 172-Լ
ք.Երևան